***Արձանագրություն***

***«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Թալին համայնքի Հացաշեն բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսման***

***Հացաշեն բնակավայր***

*19/03/2025թ.*

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման հավելվածի՝ 2025 թ. մարտի 19-ին՝ ժամը 12:00-ին Արագածոտնի մարզի Թալին համայնքի Հացաշեն բնակավայրի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Հացաշեն բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին.

- «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ մասնագետ՝ Ս. Կիզիրյանը,
- «Հայնախագիծ» ԲԲԸ-ի աշխատակից՝ Հ. Սողոմոնյանը,
- Թալին համայնքի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Գ. Միրզախանյանը,
- Հացաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Կիրակոսյանը,
- աշխատակիցները, բնակիչները, ուսուցիչները և այլն:

Բացման խոսքով հանդես եկավ Ս. Կիզիրյանը, ներկայացրեց, որ փորձաքննության է ներկայացվել «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից Արագածոտնի մարզի Թալին համայնքի Հացաշեն բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Քաղաքաշինության կոմիտեի պատվերով «Մինչև 2026թ. կառուցվող, վերակառուցվող կամ հիմնանորոգվող 300 դպրոցներ»-ի ծրագրի շրջանակներում: Նշեց, որ կատարվել են համապատասխան ծանուցումներ, գործունեության վերաբերյալ իրենց կարծիքներն են հայտնել մի շարք նախարարություններ, շրջակա միջավայրի նախարարության մասնագիտական ստորաբաժանումները և փորձաքննական կենտրոնը, որոնց կարծիքների, առաջարկությունների և դիտողությունների հիման վրա հաշվետվությունը լրամշակվել է:

Հանրային քննարկման ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում հանրությունը կարող է իր կարծիքը, դիտողությունը կամ առաջարկությունը գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն:

Նախատեսվում է կառուցել 144 աշակերտի համար դպրոց և 40 երեխայի համար մանկապարտեզ, ընդհանուր 1.2 հա մակերեսով հողատարածքի վրա, կառուցապատումը՝ 2037 քմ, կանաչապատումը՝ 5544 քմ, բարեկարգումը՝ ասֆալտապատ փողոցը՝ 1610.5 քմ, իսկ մայթեր, անցումներ՝ 1701 քմ:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության նպատակն է բացահայտել, վերլուծել ու գնահատել բնապահպանական ազդեցությունները, որոնք կապված կլինեն քանդման, փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների, փոշու արտանետումների հետ՝ հիմքերի փորման, շինարարության փուլում, վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները, և այլ գործոններ:

Թվարկված աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու, չեզոքացնելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հաշվետվության մեջ:

Խոսքը փոխանցեց «Հայնախագիծ» ԲԲԸ-ի աշխատակցին, ով մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեությունը, նշեց, որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Հացաշեն բնակավայրում: Կրթահամալիրը բաղկացած է լինելու 3 մասնաշենքից, 144 աշակերտի համար նախատեսված դպրոց, և մանկապարտեզ՝ 40 երեխայի համար: Նախատեսված է նկուղային հարկ, որը կկիրառվի որպես թաքստոց: Նախատեսված են մարզադաշտ, մանկապարտեզի սաների համար մանկական խաղադաշտ: Մանկապարտեզի մասնաշենքը նախատեսված է երկու խմբի համար և միջանցքով կապված է լինելու դպրոցական մասնաշենքի հետ:

Հարցեր հնչեցին նախատեսվող գործունեության վերաբերյալ, մասնավորապես՝ արևային վահանակների, կոյուղու, կանաչապատման տեսակային և քանակական կազմի, ոռոգման համակարգի, ջեռուցման, գազամատակարարման վերաբերյալ:

Նախաձեռնողի կողմից տրվեցին պատասխաններ, համաձայն որի արևային վահանակները նախատեսվում են դպրոցի տարածքում, ոռոգման համակարգը սնվելու է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվելու է մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը: Ջուրը ջրասույզ պոմպի միջոցով մղվելու է ոռոգման համակարգ, նախատեսվում է տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում, ջեռուցումը նախատեսված է էլեկտրական յուղային ռադիատորներով: Նշվեց, որ նոր կրթահամալիրը կկառուցվի, այնուհետև կքանդեն արդեն հին դպրոցը:

Հարց հնչեց ճանապարհների ծանրաբեռնվածության և վնասման վերաբերյալ, որին շինարարական կազմակերպության ներկայացուցիչը պատասխանեց, որ մեքենաների բեռնումը կիրականացվի համաձայն նորմերի, կիրականացվի ջրցան, ինչպես նաև կտեղափոխվի փակ ծածկով մեքենայով՝ փոշու արտանետումների նվազեցման նպատակով:

Այլ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին և ամփոփելով լսումների արդյունքները, մասնակիցների կողմից գործունեությունն արժանացավ հավանության:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը:

Քննարկումների պատասխանատու և վարող՝
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ ---------- Սվետլանա Կիզիրյան
(ստորագրություն)

Ձեռնարկող՝ «Հայնախագիծ» ԲԲԸ ---------- Հ. Ադոյան
(ստորագրություն)

Մարտի 19, 2025թ.